

ԳԼՈՒԽ

1

ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐ

§4

ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐԻ ՄՈՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Էջ 29: Էվկլիդեսի մասին լրացնել իմ դասագրքից

(Մեծերի կյանքից. Էվկլիդես):

Հույն հանճարեղ մաթեմատիկոս Էվկլիդեսը ապրել է մ.թ.ա. IV դարում: Նա ծնվել է Աթենքում, եղել է մեծ փիլիսոփա Պլատոնի աշակերտը: Եգիպտոսի Պտղոմեոս I թագավորի հրավերով Էվկլիդեսը մեկնում է Ալեքսանդրիա և այնտեղ հիմնում իր մաթեմատիկական դպրոցը: Արդեն այդ ժամանակաշրջանում հունական մաթեմատիկոսների կողմից հայտնագործվել և հավաքվել էր երկրաչափական փաստերի հսկայական պաշար: Բայց այդ փաստերը չէին համակարգված և շարադրված տրամաբանական ընդհանուր համակարգով: Այս հսկայական և աննախադեպ աշխատանքը կատարեց Էվկլիդեսը իր «Տարերք» 13-հատորանոց աշխատության մեջ: Նշված նյութը նա հարստացրեց սեփական հայտնագործություններով, ինչի արդյունքում երկրաչափությունը ստացավ տրամաբանական այնպիսի շարադրանք, որը մարդկային միտքը ի զորու չեղավ բարելավել հետագա երկու հազարամյակների ընթացքում: Գիտության պատմության մեջ նման երևույթ հայտնի չէ: Ավելին, հետագա բոլոր դարերում «Տարերք» երկրաչափության ուսուցման միակ դասագիրքն էր:

